# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ««ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ««ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹ) ԸՆԴՈՒՆՄԱՆ

> Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ:
>
> ՀՀ Սահմանադրություն հոդված 77:

Ժողովրդավարական քաղաքական համակարգերն առանձնանում են իշխանության օրենսդիր և գործադիր ինստիտուտների միջև առկա փոխադարձ զսպումներով և հակակշիռներով. Սուբյեկտներից յուրաքանչյուրին վերապահված են հստակ լիազորություններ և իրենց ներհատուկ գործառույթներ: Վերջիններիս մեջ առանձնանում է օրենսդիր մարմնի կողմից վերահսկողության իրականացումը, որը հնարավորություն է ընձեռում վերահսկել գործադիր մարմնի գործունեությունը վարվող քաղաքականության և ծրագրերի իրականացման մասով՝ օրենսդրի կողմից ընդունված օրենքներին և պետական բյուջեին համապատասխան:

Հայաստանի Հանրապետությունն որդեգրելով ժողովրդավարական քաղաքական համակարգի վերոնշյալ ատրիբուտները, կարևորելով պետական ֆինանսների կառավարման ոլորտում գործադիր մարմնի նկատմամբ օրենսդիր մարմնի վերահսկողական դերի անհրաժեշտությունը ՀՀ Սահմանադրության 77-րդ հոդվածում ամրագրել է, որ ՀՀ Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ:

Աշխարհում հայտնի են գործադիրի նկատմամբ օրենսդրի կողմից բյուջետային ոլորտում վերահսկողության տարբեր գործիքներ, որոնք կիրառվում են թե ընթացիկ վերահսկողության, թե տարեկան՝ վերահսկողության ժամանակ:

Խորհրդարանի կողմից ընթացիկ վերահսկողության առավել գործածվող գործիքակազմը հետևյալն է. Պետական բյուջեի կատարմանն առնչվող (պետական բյուջեի կատարման եռամսյակային հաշվետվություններ, առանձին ոլորտներում իրավիճակի ուսումնասիրություններ, քննարկումներ և վերլուծություններ, ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի՝ վերահսկողության բարձրագույն ատյանի միջոցով և սերտ համագործակցությամբ և այլն) հարցերի վերաբերյալ քննարկումներ մասնագիտացված ոլորտային հանձնաժողովում և խորհրդարանական լսումներ, պատգամավորների և մասնագիտացված ոլորտային հանձնաժողովի կողմից հարցեր և հարցադրումներ կառավարությանը, բյուջետային գրասենյակի գործունեություն, խորհրդարանում կառավարության հետ հարց և պատասխան:

Պետական բյուջեի կատարման տարեկան վերահսկողությունը կենտրոնանում է կատարողականի հաշվետվության քննարկման և հաստատման/չհաստատման խնդրի վրա:

ՀՀ Ազգային ժողովում տարիներ շարունակ առավել կիրառելի է եղել տարեկան վերահսկողությունը, որոշ իմաստով անտեսելով ընթացիկ վերահսկողությունը, ինչը աշխարհում, երբեմն ավելի կարևոր է համարվում, քանի որ այն հնարավորություն է տալիս օպերատիվ կերպով հետևել կատարման ընթացքին, անհրաժեշտության դեպքում արագ արձագանքել ի հայտ եկած խնդիրներին և այլն:

Օրենսդրական այս փոփոխությունների նպատակն է ուժեղացնել Ազգային ժողովի վերահսկողական կարողություններն այս ուղղությամբ, ինչը կհանգեցնի Ազգային ժողովի դերի հզորացմանը: Ներդնելով պետական բյուջեի եռամսյակային կատարման տեղեկատվության, ՀՀ վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվությունների և հայտնաբերված խախտումների վերացմանն ուղղված վերահսկվող օբյեկտի պաշտոնատար անձանց ներկայացրած տեղեկանքների քննարկումների պրակտիկան և բյուջետային գրասենյակի գաղափարն Ազգային ժողովը կհզորացնի իր վերահսկողական գործառույթները և ավելի ամբողջական կիրականացնի Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունները:

Խորհրդարանական վերահսկողության գործիքակազմում իր առանձնահատուկ տեղն ունեն վերը նշված խորհրդարանական բյուջետային գրասենյակները, իրենց ուրույն առաքելությամբ:

**Խնդրի ընդհանուր ներկայացումը.**

Հայաստանում ներդրվել է ծրագրային բյուջետավորման բարեփոխումների հայեցակարգը, ինչը, բազմաթիվ այլ ինստիտուցիոնալ փոփոխություններից զատ ենթադրում է նաև բյուջետային գործընթացի շրջանակում մեծածավալ տեղեկատվության կազմում և

ներկայացում օրենսդիր մարմնին, որը ՀՀ Սահմանադրության համաձայն ոչ միայն հաստատում է պետական բյուջեն, այլ նաև վերահսկում է դրա կատարումը:

Նախ մեծածավալ բյուջետային փաթեթը (շուրջ 4000 էջ) հաճախ պահանջում է որոշակի մասնագիտական կարողություն՝ ինչպես տեղեկատվություն ստանալու, այնպես էլ սոցիալ-տնտեսական զարգացման օրինաչափությունները ընկալելու և դրանք հավուր պատշաճի ներկայացնելու համար: Մյուս կողմից Ազգային ժողովում բյուջեի նախագծի քննարկման ժամանակ պատգամավորներին, ԱԺ հանձնաժողովներին, խմբակցություններին և պատգամավորական խմբերին անհրաժեշտ է ցուցաբերել աջակցություն բյուջետային առաջարկների մշակման և ներկայացման համար: Բացի այդ, Սահմանադրության 77-րդ հոդվածը նախատեսում է օրենսդիր մարմնի կողմից բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա վարկային միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողության գործառույթ, ինչը նույնպես պատգամավորներից պահանջում է մասնագիտական և արդյունքային տեղեկատվությանը տիրապետելու անհրաժեշտ իմացություն: Ի վերջո հանրային միջոցների ծախսման, դրված նպատակներին հասնելու և զարգացման օրինաչափությունները հանրության լայն շրջանակներին ներկայացնելու համար, հարկ է որպեսզի ԱԺ-ում քննարկումներն ու առաջարկությունները հիմնված լինեն ամբողջական տեղեկատվության վրա: Որպես այս խնդիրների լուծման արդյունավետ միջոց առաջարկվում է ստեղծել փորձագետների աշխատանքային խումբ (Բյուջետային գրասենյակ):

**Միջազգային փորձը.**

Միջազգային փորձում բյուջետային գրասենյակը տարածված երևույթ է այն երկրներում, որտեղ հանրային միջոցների նկատմամբ գոյություն ունի պատշաճ վերահսկողություն: Բյուջետային գրասենյակների գործառույթները տարբեր են տարբեր երկրներում: Հարկ է փաստել, որ բյուջետային գրասենյակի գործառույթների ծավալը պայմանավորվում է նաև գրասենյակի թվակազմով, որը մինչև մեկ տասնյակից հասնում է մի քանի հարյուրի և ֆինանսավորմամբ:

Լավագույն միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այլ երկրներում բյուջետային գրասենյակների գործառույթների առավել արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է գրասենյակի գործունեության համար ապահովել անկախության բարձր աստիճան:

Լավագույն միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում, տարբեր երկրների բյուջետային գրասենյակները կարելի է բաժանել 3 խմբի: Առաջին խմբում ներգրավված են փոքր գրասենյակներ՝սահմանափակ աշխատակազմով և գործառույթներով, (օր.՝ Գերմանիայի Հեսսեն երկրամասի խորհրդարանական բյուջետային գրասենյակ, էստոնիայի խորհրդարանական բյուջետային գրասենյակ, Լեհաստանի Սեյմի ուսումնասիրությունների բյուրոյի ֆինանսական և պետական բյուջեի ուսումնասիրության խումբ): Միջին չափի գրասենյակների, որոնք ունեն ընդլայնված աշխատակազմ և գործառույթներ (այդ թվում՝ վերլուծական և սեփական նախաձեռնությամբ իրականցվող աշխատանքներ), թվում են Կանադայի և Ավստրալիայի խորհրդարանական բյուջետային գրասենյակները:

Ծառայությունների լայն շրջանակ ներառող խոշոր բյուջետային գրասենյակի լավագույն օրինակներից է Կորեայի Հանրապետության Ազգային Ժողովի բյուջետային գրասենյակը: Այս գրասենյակը բաղկացած է 4 ստորաբաժանումներից և 17 խմբերից, դրա տարեկան բյուջեն կազմում է 12.7 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2007 թ. դրությամբ այն ունեցել է 135 աշխատակիցներ:

Եվս մեկ խոշոր բյուջետային գրասենյակի օրինակ է հանդիսանում ԱՄՆ Կոնգրեսի բյուջետային գրասենյակը: 1975 թվականից գործող գրասենյակի կազմում կան 8 ստորաբաժանումներ, այդ թվում բյուջեի վերլուծության, երկարաժամկետ վերլուծության, մակրոտնտեսական վերլուծության, կառավարման, բիզնեսի և տեղեկատվական ծառայությունների, միկրոտնտեսական ուսումնասիրությունների, ազգային անվտանության և հարկերի վերլուծության ստորաբաժանումներ, ինչպես նաև տնօրենի վարչակազմ: Գրասենյակն ունի 235 աշխատակից, որոնց մեծամասնությունը տնտեսագետներ և հանրային քաղաքականության վերլուծաբաններ են:

**Աղյուսակ 1. Տարբեր երկների բյուջետային գրասենյակների աշխատակազմի չափի և բյուջեի վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն**

| NN | Երկիր/երկրամաս/միություն | Աշխատակազմի չափը | Բյուջե |
|---|---|---|---|
| 1. | Հեսսենի երկրամաս | 4 | EUR 0.322 մլն. |
| 2. | էստոնիա | 5 | Տեղեկություն չկա |
| 3. | Լեհաստան | 7 | Տեղեկություն չկա |
| 4. | Նոր Հարավային Ուելս | առնվազն 9 | AUD 4.0 մլն., նվազելու է մինչև AUD 3.0 մլն. |
| 5. | Քենիա | 10 | Տեղեկություն չկա |
| 6. | Շվեդիա | 6 կես դրույքով անդամներ և 5 լրիվ դրույքով աշխատակազմ | SEK 7.55 մլն. (հավասար է USD 1.14 մլն.) |
| 7. | Ավստրալիա | 12 (պետք է ընդլայնվի մինչև 30-35) | AUD 6.083 մլն. |

| | | | |
|---|---|---|---|
| 8. | Կանադա | 15 + 2 պրակտիկանտ | CAD 2.8 մլն. |
| 9. | ԵՄ-Եվրոպական Խորհրդարան | 100-200 քաղաքացիական ծառայողներ, որոնք աշխատում են այս հարցերի շուրջ | EUR 2.0 մլրդ. (Գլխավոր Քարտուղարության ընդհանուր բյուջե) |
| 10. | Կորեայի Հանրապետություն | 135 | USD 12.7 մլն. |
| 11. | ԱՄՆ | 235 | Տեղեկություն չկա |

## ՀՀ ԱԺ Բյուջետային գրասենյակի չափորոշիչները

Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման արդյունքում ընտրվել են ստեղծվելիք Բյուջետային գրասենյակի համար հետևյալ գործառույթները:

**Աղյուսակ 2. Այլ երկրների բյուջետային գրասենյակներին վերապահված և սույն փաթեթով ՀՀ ԱԺ Բյուջետային գրասենյակի համար առաջարկվող գործառույթներ**

| NN | Գործառույթ | Այլ երկների փորձ |
|---|---|---|
| 1. | Բյուջեի նախագծի և հաշվետվությունների քննարկումներին նվիրված հանձնաժողովների նիստերին մասնակցություն | Լեհաստան, Կորեա |
| 2. | Ծրագրային բյուջետավորման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում | Ավստրալիա |
| 3. | Բյուջեի նախագծի (նաև ճյուղային կառուցվածքի, ծրագրերի, ոլորտների) սեղմագրերի և տեղեկանքների պատրաստում | Ավստրալիա, Լեհաստան, Կանադա, Հեսսեն, Շվեդիա, Կորեա, Էստոնիա, Քենիա |
| 4. | Բյուջեի նախագծի վերաբերյալ փոփոխությունների մասին առաջարկությունների ձևակերպման նպատակով՝ պատգամավորներին աջակցության տրամադրում | Ավստրալիա, Հեսսեն, Կանադա, Շվեդիա, Կորեա, Էստոնիա, Քենիա |
| 5. | Բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկանքներ տրամանդրելու նպատակով՝ բյուջեի կատարման, այդ թվում առցանց մշտադիտարկում | Ավստրալիա, Լեհաստան, Կանադա |
| 6. | Բյուջեից հատկացվող միջոցների վերաբերյալ տեղեկանքների պատրաստում | Ավստրալիա, Հեսսեն, Կանադա, Կորեա |
| 7. | Բյուջեի վրա միջազգային վարկերի սպասարկման ազդեցության, ինչպես նաև պետական պարտքի և պետական եկամուտների վերաբերյալ տեղեկանքների պատրաստում | Լեհաստան, Կորեա, Ավստրալիա, մասամբ՝ Շվեդիա, Կանադա |
| 8. | Բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ հարցերի կամ հարցապնդումների ձևակերպման աջակցություն | Ավստրալիա, Հեսսեն, Լեհաստան, Կանադա |
| 9. | Բյուջեի կատարման տարեկան հաշվետվության (նաև ճյուղային կառուցվածքի ծրագրերի, ոլորտների) սեղմագրերի և տեղեկանքների պատրաստում | Ավստրալիա, Լեհաստան, Կանադա |
| 10. | Գերագույն վերահսկիչ մարմնի հաշվետվությունների վերաբերյալ տեղեկանքների պատրաստում | Ավստրալիա, Լեհաստան, Կանադա, Շվեդիա |
| 11. | ԽԲԳ-ի կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ՝ հանրությանը հասանելի տարեկան հաշվետվության, ինչպես նաև եռամսյակային զեկույցների, տեղեկանքների պարբերաբար ներկայացում գլխադասային հանձնաժողովին | Ավստրալիա, Լեհաստան, Քենիա, Շվեդիա |

Աղյուսակ 2-ում ներկայացված գործառույթներն արդյունավետորեն իրականացնելու նպատակով առաջարկվում է ստեղծել փորձագետների աշխատանքային խումբ (այսուհետ՝ Բյուջետային գրասենյակ), «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքով ապահովելով Բյուջետային գրասենյակի անկախության բարձր աստիճան: Բյուջետային գրասենյակի փորձագետները պետք է իրենց պարտականությունների շրջանակներում և սահմանված կարգով մասնագիտական աջակցություն և տեղեկատվություն տրամադրեն Ազգային ժողովի պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին և պատգամավորական խմբերին՝ Սահմանադրության 77-րդ հոդվածով Ազգային ժողովին վերապահված վերահսկողական լիազորությունների, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 10-րդ, 11-րդ գլուխներով և 101-րդ հոդվածով նախատեսված դրույթների արդյունավետ իրականացմանը նպաստելու համար:

Սույն օրենսդրական փաթեթով Բյուջետային գրասենյակը կունենա 5 փորձագետ՝ համակարգող փորձագետ և 4 այլ փորձագետներ: Ստեղծվող Բյուջետային գրասենյակը կարելի կլինի դասել փոքր բյուջետային գրասենյակների շարքին ( աղյուսակ N1 առաջին խումբ): Հարկ է նշել, որ ապագայում, Բյուջետային գրասենյակի կայացման գործընթացին զուգահեռ, ՀՀ ԱԺ կարող է անդրադարնալ Բյուջետային գրասենյակի աշխատակազմի, ֆինանսավորման և գործառույթների ավելացման հարցին: Մասնավորապես, հաջորդ փուլում Բյուջետային գրասենյակի գործառույթների ցանկում նախատեսվում է ավելացնել.

ա) Բյուջեի նախագծում առաջարկվող փոփոխությունների ֆինանսական ազդեցության վերլուծությունը;

բ) Իշխանության կամ ընդիմության կողմից ներկայացվող տարբեր առաջարկությունների ֆինանսական արժեքի գնահատումը;

գ) Բյուջեի և ՄԺԾԾ կատարմանը նպաստող կամ խանգարող գործոնների վերլուծությունը:

Բյուջետային գրասենյակի գործառութային անկախության բարձր աստիճանն ապահովելու նպատակով առաջարկվում է օրենքով ամրագրել Բյուջետային գրասենյակի ստեղծումը, Բյուջետային գրասենյակի կարգավիճակը, գործառույթները և փորձագետների թվաքանակը, Բյուջետային գրասենյակի կանոնակարգը, փորձագետներին ներկայացվող պահանջները, նրանց ընտրության (նշանակման) կարգը, վարձատրության չափը:

Բյուջետային գրասենյակն էապես կնպաստի ոչ միայն Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովի, որպես Ազգային ժողովում բյուջետային ոլորտի առաջատար կառույցի ինստիտուցիոնալ կարողությունների հզորացմանը և գործառույթների առավել արդյունավետ իրականցմանը, այլ նաև խորհրդարանական վերահսկողության առումով էական նշանակություն կունենա մյուս մշտական հանձնաժողովների, խմբակցությունների և պատգամավորական խմբերի,

պատգամավորների հնարավորությունների լիարժեք օգտագործմանաը՝ դրանով իսկ նպաստելով Ազգային ժողովի վերահսկողական առաքելության արդյունավետ իրականացմանը:

**«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ**

Հոդված 1-ով պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների, կազմակերպությունների ղեկավարների ու պաշտոնատար անձանց հետ պատգամավորի փոխհարաբերություններում վերջինիս համար գործունեության երաշխիք է ամրագրվում՝ Բյուջետային գրասենյակի միջոցով կատարված գրավոր հարցմանը գրավոր պատասխանելու 10-օրյա ժամկետի տեսքով:

Հոդված 2-ով վերախմբագրելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը հստակ տարանջատվում են մշտական հանձնաժողովների կողմից ստեղծվող ենթահանձնաժողովների և աշխատանքային խմբերի ու կազմավորվող փորձագետների աշխատանքային խմբի (այսուհետ՝ Բյուջետային գրասենյակ) ձևավորման մեխանիզմները, նպատակները, գործառույթները և գործունեության այլ մանրամասները: Մասնավորապես.

- Մշտական հանձնաժողովների կողմից ստեղծվող ենթահանձնաժողովների և աշխատանքային խմբերի ձևավորման մեխանիզմները, նպատակները, գործառույթները և գործունեության այլ մանրամասները մնացել են անփոփոխ;
- Փորձագետների աշխատանքային խումբ (Բյուջետային գրասենյակ).

1. Սահմանվում է, որ Բյուջետային գրասենյակը ստեղծվում է պատգամավորներին, մշտական հանձնաժողովներին, խմբակցություններին և պատգամավորական խմբերին մասնագիտական աջակցություն ու տեղեկատվություն տրամադրելու նպատակով,
2. Սահմանվում են Բյուջետային գրասենյակի գործառույթները՝

**Աղյուսակ 3. Աղյուսակ 2-ում ներկայացված և սույն օրենսդրական փաթեթով բյուջետային գրասենյակին վերապահվող գործառույթները**

| NN | Տարբեր երկրների բյուջետային գրասենյակների գործառույթներ | Սույն օրենսդրական փաթեթով առաջարկվող ՀՀ Ազգային ժողովի Բյուջետային գրասենյակի գործառույթներ | NN |
|---|---|---|---|

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Բյուջեի նախագծի և հաշվետվությունների քննարկումներին նվիրված հանձնաժողովների նիստերին մասնակցություն | Իրացվում է օրենքի նախագծի 3-րդ հոդվածով | |
| 2 | Ծրագրային բյուջետավորման վերաբերյալ տեղեկատվության ներկայացում | Պետական բյուջեի նախագծում, պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունում բյուջետային մուտքերը և ելքերը ծրագրային և/ կամ այլ ձևաչափով ներկայացված փաստաթղթի վերաբերյալ տեղեկանքների տրամադրումը | ա |
| | | Ծրագրային բյուջետավորման ձևաչափի վերաբերյալ դասընթացների կազմակերպումը | բ |
| 3 | Բյուջեի նախագծի (նաև ճյուղային կառուցվածքի, ծրագրերի, ոլորտների) սեղմագրերի և տեղեկանքների պատրաստում | Պետական բյուջեի նախագծի ամփոփ նկարագրի պատրաստումը, ինչպես նաև ճյուղային, ծրագրային, ոլորտային ամփոփ նկարագրերի և տեղեկանքների պատրաստումը | գ |
| 4 | Բյուջեի նախագծի վերաբերյալ փոփոխությունների մասին առաջարկությունների ձևակերպման նպատակով՝ պատգամավորներին աջակցության տրամադրում | Պետական բյուջեի նախագծում փոփոխություններ կատարելու մասին առաջարկությունների ձևակերպմանը աջակցությունը՝ անհրաժեշտության դեպքում իրականացնելով հաշվարկներ | դ |
| 5 | Բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկանքներ տրամանդրելու նպատակով՝ բյուջեի կատարման, այդ թվում առցանց մշտադիտարկում | Պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու նպատակով պետական բյուջեի կատարման, գանձապետական հաշիվների մշտադիտարկումը, այդ թվում՝ առցանց | ե |
| 6 | Բյուջեից հատկացվող միջոցների վերաբերյալ տեղեկանքների պատրաստում | Տեղեկանքներ պետական բյուջեի եկամուտների (այդ թվում՝ արտաբյուջետային միջոցների), ինչպես նաև պետական բյուջեով հատկացվող, հատկացված մի-ջոցների (այդ թվում՝ արտաբյուջետային միջոցների) ծախսման վերաբերյալ | զ |
| 7 | Բյուջեի վրա միջազգային վարկերի սպասարկման ազդեցության, ինչպես նաև պետական պարտքի և պետական եկամուտների վերաբերյալ տեղեկանքների պատրաստում | Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ տեղեկանքների տրամադրումը, Հայաստանի Հանրապետությանում օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի, այդ թվում՝ պետական բյուջեի վրա վարկերի սպասարկման ազդեցության և Հայաստանի Հանրապետությանն օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև այլ անձանց կողմից տրամադրված դրամաշնորհների վերաբերյալ տեղեկանքների տրամադրումը | է |
| 8 | Բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ հարցերի կամ | Պետական բյուջեի կատարման վերաբերյալ հարցերի, հարցումների և հարցապնդումների | ը |

| | | | |
|---|---|---|---|
| | հարցապնդումների ձևակերպման աջակցություն | ձևակերպմանը աջակցությունը | |
| 9 | Բյուջեի կատարման տարեկան հաշվետվության (նաև ճյուղային կառուցվածքի ծրագրերի, ոլորտների) սեղմագրերի և տեղեկանքների պատրաստում | Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության ամփոփ նկարագրի, ինչպես նաև պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության ճյուղային, ծրագրային, ոլորտային ամփոփ նկարագրերի և տեղեկանքների պատրաստումը, | թ |
| | | Պետական բյուջեի կատարման (եռամսյակային) ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքի ամփոփ նկարագրի պատրաստումը | ժ |
| 10 | Գերագույն վերահսկիչ մարմնի հաշվետվությունների վերաբերյալ տեղեկանքների պատրաստում | Վերահսկիչ պալատի տարեկան, ընթացիկ հաշվետվությունների և եզրակացությունների վերաբերյալ տեղեկանքների տրամադրումը | ժա |
| 11 | ԽԲԳ-ի կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ՝ հանրությանը հասանելի տարեկան հաշվետվության, ինչպես նաև եռամսյակային զեկույցների, տեղեկանքների պարբերաբար ներկայացում գլխադասային հանձնաժողովին | Իր կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացումը ՀՀ Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովին: Տարեկան հաշվետվությունը տեղադրվում է Բյուջետային գրասենյակի ինտերնետային էջում: | ժբ |

3. Նշվում են, որ Բյուջետային գրասենյակի ստեղծումը, Բյուջետային գրասենյակի կանոնակարգը, փորձագետներին ներկայացվող պահանջները, նրանց ընտրության (նշանակման) կարգը, վարձատրության չափը, սահմանվում են Ազգային ժողովի կանոնակարգով,
4. Սահմանվում են Բյուջետային գրասենյակի կազմը՝ համակարգող փորձագետ ու 4 այլ փորձագետներ և նրանց աշխատանքի ընդունման ընթացակարգը:

Հոդված 3-ը կարգավորում են Բյուջետային գրասենյակի փորձագետների ԱԺ մշտական հանձնաժաղովների նիստերին ներկա գտնվելու հարցը:

Հոդված 4-ը կարգավորում է Բյուջետային գրասենյակի կողմից՝ իր գործառույթների իրականացման նպատակով պետական կառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց հիմնարկներին և կազմակերպություններին դիմելու հարցը:

Հոդված 5-ը կարգավորում է ԱԺ նախագահի կողմից Բյուջետային գրասենյակին պետական բյուջեի նախագծի և դրա նախնական քննարկումների անցկացման

ժամանակացույցի տրամադրումն ու Բյուջետային գրասենյակի կողմից պետական բյուջեի նախագծի ամփոփ նկարագրի պատրաստման և ներկայացման հարցերը:

Հոդված 6-ով ամրագրվում է այն դրույթը, ըստ որի Կառավարությունը խմբագրված բյուջեի նախագիծն Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելիս նախագծին կից ամփոփաթերթիկում զետեղում է ընդունված առաջարկությունների վերաբերյալ տեղեկատվություն, ըստ ծախսերի բյուջետային դասկարգման համապատասխան հոդվածի և բյուջեի նախագծի աղյուսակի համարի:

Հոդված 7-ը կարգավորում է Կառավարության կողմից բյուջեի մասին օրենքի նախագծի վերջնական տարբերակի և սահմանված կարգով կազմված ամփոփաթերթիկի Բյուջետային գրասենյակին տրամադրումը:

Հոդված 8-ը կարգավորում է Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային ոլորտի մշտական հանձնաժողովի նիստում պետական բյուջեի (եռամսյակային) կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքի քննարկման հարցերը:

Հոդված 9-ը կարգավորում է ԱԺ նախագահի կողմից Բյուջետային գրասենյակին պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության և դրա նախնական քննարկումների անցկացման ժամանակացույցի տրամադրումն ու Բյուջետային գրասենյակի կողմից պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության ամփոփ նկարագրի պատրաստման և ներկայացման հարցերը:

Հոդված 10-ը կարգավորում է Վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվությունների քննարկման հարցերը:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի **Հավելված 1-ում և Հավելված 2-ում** ներկայացվում են փորձագետների աշխատանքային խմբի (բյուջետային գրասենյակի) կանոնակարգը, փորձագետներին ներկայավցող պահանջները, նրանց ընտրության (նշանակման) կարգը, պաշտոնավարման պայմանները, ժամկետը ու վարձատրության չափը: Մասնավորապես՝ փորձագետների կարգավիճակը և նրանց ընտրության (նշանակման) կարգը (աշխատանքային հարաբերությունների ծագման հիմքը) որոշելիս ընտրվել են «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին կետի ժէ.2) ենթակետի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 86-րդ հոդվածի առաջին մասի և նույն օրենսգրքի մյուս իրավանորմերով սահմանված իրավակարգավորումները:

**«Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքում լրացումներ**

Հոդված 1-ը սահմանում է ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողության արդյունքում ընթացիկ հաշվետվության կազմման և վերահսկիչ պալատի կողմից դրա հաստատման կատարման ժամկետի հարցը:

Հոդված 2-ը կարգավորում է ՀՀ վերահսկիչ պալատին տրամադրվող ընթացիկ հաշվետվություններում և եզրակացություններում ամրագրված հայտնաբերված խախտումները վերացնելու վերաբերյալ Ազգային ժողովին գրավոր տեղեկատվության տրամադրման ժամկետի հարցը:

**«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացում**

Հոդված 1-ով կարգավորվում է Կառավարության կողմից յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո Ազգային ժողով պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը նաև էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու հարցը:

Հոդված 2-ով կարգավորվում է համայնքի զարգացման ծրագրի ժամկետի հարցը: